



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

<Արևշատ-Ա> ՍՊԸ տնօրեն
պարոն Ա.Բաղդասարյանին
հասցե՝ Արարատի մարզ, գ.Արևշատ
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ պետ
պարոն Ռ.Գևորգյանին

Կից ուղարկվում է Ձեր 16.01.2012թ. գանգատի վերաբերյալ ՀՀ
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի
գանգատարկման հանձնաժողովի 01.02.2012թ. թիվ 4/6 որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

«Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով»

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/6

1 փետրվարի 2012թ.

Քննարկվեց «Արևշատ-Ա» ՍՊԸ 16.01.2012թ. գանգատը «ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ 17.11.2011թ. թիվ 1000080 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 13.05.2011թ. թիվ 1000080 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Արևշատ-Ա» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 17.11.2011թ-ին կազմվել է թիվ 1000080 ստուգման ակտը, որով լրացուցիչ պարտավորություն է առաջադրվել՝ գումարով 30.391.048 դրամ:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ «Արևշատ-Ա» ՍՊԸ 16.01.2012թ. գանգատի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

«ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ կողմից 06.12.2011թ-ին ստուգման ակտով առաջադրված գումարը բռնագանձելու նպատակով «վարչական դատարան ներկայացվել է Հայցադիմում վճարման կարգադրություն արձակելու մասին:

«վարչական դատարանը 19.12.2011թ-ին արձակել է վճարման կարգադրություն, որի դեմ «Արևշատ-Ա» ՍՊԸ կողմից 30.12.2011թ-ին ներկայացվել է հակընդդեմ հայց:

«վարչական դատարանը 09.01.2012թ-ին ընդունել է որոշում հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու, վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու և սկզբնական հայցի հետ համատեղ քննելու մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով «Արևշատ-Ա» ՍՊԸ գանգատի հիման վրա «ԿԱ ՊԵԿ-ում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Արևշատ-Ա» ՍՊԸ գանգատի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» «Օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով «Արևշատ-Ա» ՍՊԸ 16.01.2012թ. գանգատի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ